Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 3

ք. Սևան 07.10.2021թ.

Սույն թվականի հոկտեմբերի 7-ին՝ ժամը 12.00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ Միշա Ստեփանյանին պատկանող, ք. Սևան, թերակղզու տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարման օդային գծի անցկացման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում (երրորդ փուլ)՝ մասնակցությամբ «ՀԷՑ» ՓԲԸ Գեղամա մ/ճ Սևանի տեղամասի ներկայացուցիչ Սուրիկ Քարամյանի, «Սևան» ԱՊ-ի ճարտարագետ Կարեն Բաբայանի, բնապահպան, անկախ փորձագետ Արամ Գալոյանի, Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանի, աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մեսրոպ Մկրտչյանի, առաջատար մասնագետ Սամվել Թադևոսյանի, աշխատակազմի գլխավոր մասնագետ Արտակ Ավետիսյանի և Միշա Ստեփանյանի:

Հանրային քննարկումը վարեց Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանը:

Նա հայտնեց, որ 1-ին հանրային քննարկումը տեղի ունեցել դեռևս 2020թ. սեպտեմբեր ամսին, 2-րդ հարնային քննարկումը՝ 2021թ.-ի հուլիսի 15-ին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ստացված գրությունների հիման վրա:

Արտահայտվեցին՝

«ՀԷՑ» ՓԲԸ Գեղամա մ/ճ Սևանի տեղամասի ներկայացուցիչ Ս. Քարամյան - քաղաքացի Մ. Ստեփանյանը դիմել է էլցանցի Սևան տեղամաս, նրա կողմից ստացված հայտը ստացել է համապատասխան ընթացք, կազմվել է նախագիծ: Քանի որ Ստեփանյանին պատկանող տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի հատուկ պահպանվող տարածքում, անհրաժեշտություն է առաջացել հանրային քննարկումներ կազմակերպելու:

Համաձայն հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 28 օր, ազդեցությունները շրջակա միջավայրի վրա լինելու են ժամանակավոր՝ կապված հողային աշխատանքների, տեխնիկայի աշխատանքի հետ:

2 հենասյուն տեղադրելու մասով չի կարող լինել մեծ ազդեցություն, քանի որ ծավալուն շինարարական աշխատանքներ նախատեսված չեն. պետք է կատարվի լիցք, և սյուները տեղադրվեն: Միաժամանակ նշեց, որ էլեկտրամատակարարումը հասնելու է մինչև տարածք, ինչպես նշված է նախագծային աշխատանքներում: Հոսանքը միացվելու է գործող գծից: Միշա Ստեփանյանը բաժանորդ է, և ընկերությունն իրականացնելու է իր հասանելիք աշխատանքը:

«Սևան» ԱՊ-ի ճարտարագետ Կարեն Բաբայանը նշեց, որ ազգային պարկի ներկայացուցիչներն արդեն կատարել են իրենց դիտողությունները և դրանք հաշվի են առնվել:

Անկախ փորձագետ, բնապահպան Արամ Գալոյան - Ստացված տեխնիկական առաջադրանքի հիման վրա իրականացվել է ՇՄԱԿ ազդեցության գնահատում: Պարզվել է, որ կատարվող աշխատանքները չեն կարող ունենալ էական ազդեցություն: Միաժամանակ

էլցանցն էլ պարտավորություն է ստանձնել՝ եթե լինեն արտակարգ իրավիճակներ ջրի բարձրությամբ պայմանավորված, ապա հենասյուները կտեղափոխվեն:

Սահմանված կարգով գործընթացը շարունակվում է, մեկ ամիս անց կհրավիրվի հանրային վերջին՝ 4-րդ քննարկումը: Վերջնական հաշվետվությունների հիման վրա կկայացվի համապատասխան որոշում:

Աշխատանքային նախագծում որևէ փոփոխություն չի նախատեսվում:

Գործընթացի հետագա կազմակերպման ընթացքի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չարձանագրվեցին:

Նախաձեռնող՝

՝

Նիստը վարող և քննարկումների պատասխանատու՝

Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Ղուկասյան

Արձանագրող՝

Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Ղուկասյան